



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան  
« 18 » 05 2023թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0092-23

Ձեռնարկողը՝

«ԷՄ ԶԻ ՓԻ ՌԵՍՈՒՐՍԻՉ» ՍՊԸ  
ք. Երևան, Նոր Նորք, Դ. Մայան նրբանցք, շ.3, բն. 25

Գործունեությունը՝

Նորամարզի ԱԿԽ-ի երևակման Ռեսուրս  
տեղամասի երկրաբանական ուսումնասիրության  
աշխատանքների շրջակա միջավայրի վրա  
ազդեցության նախնական գնահատման հայտ  
Արարալի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
տնօրենի պարտականությունները կատարող՝



Իսաչիկ Մարտիրոսյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՐՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՁԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0092-23

< 18 > 05 2023թ.

Արարատի մարզի Նորամարզի ավազակոպճային խառնուրդի երևակման Ռեսուրս տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝

«Էմ Զի Փի Ռեսուրսիզ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
նախնական գնահատման հայտ  
/Գ կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

Արարատի մարզ, Նորամարզ բնակավայր

**Ներածական մաս.** Արարատի մարզի Մասիս խոշորացված համայնքի Նորամարզ բնակավայրի վարչական տարածքում նախատեսվում է իրականացնել ավազակոպճային խառնուրդի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ: Հայցվող տարածքը տեղակայված է Արարատի մարզի Արտաշատ և Մասիս համայնքների միջև, Նորամարզ բնակավայրից 1.0-1.3կմ, Ռանչպար և Հովտաշեն բնակավայրերից 2.2կմ և 4.3կմ հեռավորությունների վրա, Սև ջուր և Հրազդան գետերի միջև:

Հրազդան գետը հոսում է հայցվող տարածքներից մոտ 2.4կմ, Մեծամոր գետը՝ 0.8-0.9կմ, Արաքս գետը 1.3կմ հեռավորությունների վրա:

Հայցվող տարածքի հողերն ըստ կադաստրի կոմիտեի ներկայացվել է պետական, համայնքային, քաղաքացիների սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական, ջրային, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական, էներգետիկայի, կապի, տրանսպորտի, ենթակառուցվածքների օբյեկտների հողերով:

Նախատեսվող գործունեությունը, հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի ա) ենթակետի:

**Նկարագրական մաս.** Արարատի մարզի Նորամարզի ավազի հանքերևակման Ռեսուրս տեղամասում երկրաբանահետախուզական աշխատանքների նպատակն է պարզաբանել օգտակար հանածոյի որակական հատկանիշները և դրանց պիտանելիությունը «Ավազակոպճային խառնուրդներ շինարարական աշխատանքների համար» 23735-79 ԳՈՍ-ի, 8635-95 «Ավազ շինարարական աշխատանքների համար» և 8267- 2014 «Խիճ և կոպիճ



խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար» ԳՈՍ-երի տեխնիկական պահանջներին:

Երկրաբանական ուսումնասիրության համար տարածքը բաղկացած է 2 տեղամասերից (Հատված Ա և Հատված Բ) և զբաղեցնում է 42.0 հա մակերես:

Հայցվող տարածքի կոորդինատներն են:

X	Y	X	Y
4431889.64	8448635.30	4431904.23	8449088.65
4432139.39	8448682.56	4431892.17	8449078.09
4432322.61	8448712.00	4431884.98	8449072.65
4432347.67	8448715.93	4431877.62	8449065.63
4432332.40	8448800.12	4431867.83	8449056.86
4432273.20	8448960.21	4431851.71	8449039.96
4432227.89	8449071.26	4431817.81	8449010.97
4432214.88	8449116.53	4431805.07	8449003.42
4432132.66	8449110.84	4431827.87	8448952.23
4432064.14	8449109.56	4431829.03	8448936.86
4432029.14	8449120.67	4431833.53	8448906.92
4432015.58	8449132.06	4431846.89	8448830.56
4431987.91	8449162.55	4431857.25	8448771.81
4431940.17	8449119.89	4431871.66	8448702.56
4431922.96	8449105.03	4431889.64	8448635.30

X	Y	X	Y
4431315.82	8448769.93	4431883.37	8449269.87
4431323.86	8448768.35	4431742.80	8449419.00
4431409.94	8448768.53	4431656.40	8449511.19
4431509.56	8448778.01	4431634.72	8449532.22
4431538.28	8448790.78	4431625.84	8449517.67
4431593.27	8448842.32	4431597.32	8449452.94
4431642.13	8448900.16	4431554.72	8449347.17
4431686.32	8448925.96	4431525.06	8449279.45
4431791.22	8449039.52	4431463.89	8449144.86
4431882.30	8449104.39	4431385.85	8448959.47
4431924.58	8449142.92	4431322.75	8448789.10
4431964.40	8449179.43	4431315.82	8448769.93

Տեղամասը երկրաբանական կառուցվածքի բարդությամբ դասվում է ավազի և ավազակոպճային խառնուրդի հանքավայրերի 1-ին խմբին:

Հետախուզումը նախատեսվում է իրականացնել մինչև 12մ խորությամբ 20 հորատանցքերի և 4 հետախուզահորերի միջոցով, նմուշարկման աշխատանքների զուգորդությամբ:

Հետախուզափորվածքների տեղադիրքի ընտրության ժամանակ հաշվի են առնվել ուսումնասիրության համար հատկացված տարածքի եզրագծերը, հիդրոտեխնիկական ու տրանսպորտային կառույցների և էլեկտրահաղորդման գծի առկայությունը:

Տեղամասի 1:1000 մասշտաբի երկրաբանական քարտեզի կազմման նպատակով նախատեսվում է կատարել տոպոգրաֆիական և երկրաբանական հանույթ հանքավայրի Ա և Բ տեղամասերում (22.5+19.5) 42.0 հա տարածքի վրա, բոլոր հետախուզական փորվածքների և նմուշարկման տեղերի, ապարների երկրաբանական սահմանների գործիքային տեղադրմամբ:

Հետախուզահորերը նախատեսվում է անցնել CAT 320 էքսկավատորով, հորատանցքերը՝ ՍՐԵ 2A2 հորատող հաստոցով:

Նախնական տվյալներով նախատեսվում է իրականացնել 240գծ/մ հորատման աշխատանքներ և անցնել 20գծ/մ հետախուզահորեր:



Մինչ հորատման աշխատանքները սկսելը նախապատրաստվելու է հորատման հրապարակները 15մ x 5մ չափսերի, որի ժամանակ հեռացվելու է հողաբուսական շերտը (0.3մ):

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են բոլոր հետախուզահորերը հորատահանուկները (նվազագույնը 260.0 գծ/մ):

Նախատեսվում է հորատահանուկների նմուշարկումը կատարել կուտակի լրիվ հզորությամբ, ամեն հորատանցքից կվերցվի 2 համախառն նմուշ:

Նախատեսվում է կատարել 44 նմուշների ֆիզիկամեխանիկական փորձարկումներ, 6 նմուշների քիմիական և 4՝ միներալապետրոգրաֆիական ուսումնասիրությունների:

Քիմիական անալիզների և միներալապետրոգրաֆիական ուսումնասիրությունների համար նախատեսվում է վերցնել (6+4) 10 նմուշներ:

Ավազների բնական խտության (բնամասում), ծավալալիքային զանգվածի և փխրեցման գործակցի որոշումը կկատարվի դաշտային պայմաններում, տեղամասի տարբեր մասերում, չորս հետախուզահորերի անցմանը զուգընթաց:

Քանի որ տեղամասին մոտեցնող ճանապարհները բարենպաստ են, ուստի ճանապարհների նորոգում և կառուցում չի նախատեսվում:

Հետախուզվող տարածքում ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների պարզաբանման նպատակով նախատեսվում է կատարել համապատասխան դիտարկումներ:

Ինժեներաերկրաբանական հետազոտություններով նախատեսվում է պարզել տեղամասի ապարների կազմը, ապարների կառուցվածքային առանձնահատկությունները, անիզոտրոպիան, պարզաբանել տեղանքի գեոդինամիկ պրցեսները:

Դիտարկումները նախատեսվում է կատարել ամիսը մեկ անգամ:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ կպահանջվի խմելու և տեխնիկական ջուր:

Տեխնիկական ջուրը կվերցվի գետից, իսկ խմելու ջուրը կբերվի ավտոտրանսպորտով մոտակա բնակավայրերից:

Ռեկուլտիվացիայի ենթակա ընդհանուր մակերեսը կազմում է 1524մ<sup>2</sup>: Վերականգնման ենթակա ծավալը, որը կազմում է 457.2մ<sup>3</sup>, կարճաժամկետ կկուտակվի խախտված տարածքների անմիջական հարևանությամբ առանձին-առանձին և աշխատանքների անմիջապես ավարտից հետո ամբողջությամբ կօգտագործվի խախտված հողատարածքների վերականգնման համար: Աշխատանքները կատարվելու են ձեռքով: Ռեկուլտիվացիայի աշխատանքների արժեքը կազմում է 761.7հազ.դրամ:

Հայցվող տարածքում հողաբուսական շերտը ներկայացված է առավելագույնը 0.3մ հզորությամբ:

Հանքերևակման տարածքում նախատեսվում է նաև կատարել սքրինինգային ճառագայթային մոնիթորինգ, որի արդյունքում որոշվելու է տարածքի ճառագայթային իրավիճակը:

Հողօգտագործման համար վնասի փոխհատուցման գումարը համայնքին կկազմի 53340 դրամ:

Համաձայն հայտում եղած տեղեկատվության, նախատեսվող գործունեության իրականացման տարածքում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բույսեր և կենդանիներ չեն հայտնաբերվել:

Տարածքում բնության և պատմամշակույթային հուշարձաններ չկան:



**Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները:**

-Վառելիքի հիմնական լիցքավորման և քսայուղերի փոխարինման աշխատանքները կատարվելու են հարակից բնակավայրերում՝ համապատասխան ծառայություն մատուցող կայաններում: Տեղամասի տարածքում նավթամթերքների պահեստավորում/պահպանում չի նախատեսվում:

-Աշխատանքների ժամանակ կիրառվող CAT 320 էքսկավատորի և աշխատանքները սպարկող մեքենաների վրա արտաթորվող թունավոր նյութերի ֆիլտրերի տեղադրում :

-Փոշենստեցման նպատակով աշխատանքների տարածքի ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին :

-Կեղտաջրերի հավաքում հորատիպ անթափանց բետոնապատ զուգարանում, որը հետագայում դատարկում են հատուկ ծառայության ուժերով :

- Վայրի բուսատեսակների և դրանց պոպուլյացիաների վիճակի ուսումնասիրության (տեսակային կազմ, տարածվածություն, քանակ) իրականացում:

**Աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.**

Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ երկրաբանական ուսումնասիրության ընթացքում յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ:

Տեղամասերին հարակից ջրանցքներում ջրի որակի դիտարկում ամսական մեկ անգամ հաճախականությամբ:

Տեղամասերի մակերեսների դիտարկում՝ նավթամթերքներով աղտոտվածությունը բացառելու նպատակով, տարեկան մեկ անգամ:

Տեղամասում և հարակից տարածքում կենսաբազմազանության դիտարկում, տարեկան մեկ անգամ:

Աղմուկի մակարդակ, տարեկան մեկ անգամ:

Մշտադիտարկումների կատարման համար տարեկան նախատեսվում է մասնահանել 420.0հազ.դրամ :

**Պատճառաբանական մաս.** Օրենսդրությամբ սահմանված կարգով, Արարատի մարզի Նորամարզի ավազակոպճային խառնուրդի երևակման Ռեսուրս տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ Արարատի մարզի Մասիս համայնքի Նորամարզ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, ինչպես նաև կադաստրի կոմիտեն և Արարատի մարզպետարանը:

Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:



## Փորձաքննական պահանջներ

Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:

- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:

- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:

- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

## ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«Էմ Ջի Փի Ռեսուրսիզ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արարատի մարզի Նորամարզի ավազակոպճային խառնուրդի երևակման Ռեսուրս տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ



Գրիգոր Մինասյան